

21333

Արաւելահայկ քոյկը
Խ ընկ

891.99.09

G-61

1910

391.99.09

Ն-61

ՆԵՐԱՇԽԱՐՅ ԲՈՑԵՐ ԵՒ Ը^{ՆԿ} (L^{ԻԺ})

(ԱՆՈՒՄ ԵՆԿԵՐՈՒԹԻՒՆ)

Հ Ի Մ Ն Ո Ւ Ս Թ 1806 Ի Ն

ԿԵՐՈՆԱՏԵԼԻ ԻՍԿԻՏԱՐԻ ԲԱՐՁՈՒՆՔԸ

Յայտագիր

(Prospectus)

ՏՊԱՐԱՆ "ՇԱՆԹ"

91.99.09

Կ. ՊՈԼԻՍ

1910

Ն-61

ՆԵՐԱՇԽԱՐՀ ԲՈՅԵՐ ԵՒ ԸՆԿ. (L^{TD})

Հիմնադիր Նախագահ՝ Ինգրա, բրոն. փիլիսոփայության, գրականության, գեղարուեստի, նաշակի, սեմպոլիզմի, ինֆնագոլությունից եւ նոգեփոխական վարդապետություններու՝ որոնց կենդանի ապացույցը կը նկատե ինֆզինքը — քանի որ ապահով է քե, իր գոյութեամբը Վոսփորի ակերը պատուելի դարեր առաջ, Նեղոսի ակերուն ալ շուայած եր միեւնոյն պատիւը, գրավանառ խալիլ աղայի համես մորքին ներքեւ :

Իրամագլուխ՝ ամբողջովին վնարուած,

10,000 անհասկնալի բառեր,

5,000 մեջէն չեղունելիք՝ նախադասութիւններ,

5,000 իրար չի բռնող լանգեր : Պահեստի՝

2,500 Սեմպոլիսը դարձուածք՝ որուն $\frac{1}{4}$ ին $\frac{47}{55}$ ր Ներաշխարհի արժե...բուրքերուն յաշկացուած է, $\frac{1}{8}$ ին $\frac{16}{25}$ ր Արեւելի բոցերուն, եւ մնացածն ալ ամբողջովին տրամադրելի :

Վարչական Ժողովի Տնօրէն՝

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Պատկ. Ի գեղար. եւ Ի քերթ.

Ընդհանուր Քարտուղար

ՎԱՅՐԱՍ ԹԱԹՈՒԼ

Յայտագիր

(Prospectus)

1. Ընկերութեան նպատակն է Հայ զբաղմունքները վերելել՝ հասարակ մահկանացուներէ կազմուած հանրութեան մը հասկընալի բլլալու տափակութենէն, և ձեռքէն բռնելով տանիլ անտակ խորախորհուրդ բարձրութիւններու, ուր միայն ընտրեալ անմահներու նպատածքները կարենան թափանցել :

2. Հայ լեզուի մասին մինչեւ հիմա յայտնուած բոլոր մասնագէտ — բանասէրներու կարծիքներուն սխալ բլլալը տապալուցանել, և բառերու կազմութիւնը հիմնական յեղաշրջումի մը ենթարկելով զայն տակաւ մօտեցնել իր բուն մայր լեզուն... Զինարէնի :

Օրինակ՝ Տեղ չի բռնող ռամկայած ու աղաւաղուած բանաձեւին տեղ դորձածել բուն չիտակը, որ է Զտեղ բռնող (Տեա ներաշխարհ) :

3. Արձակի մէջ սովորական դարձած նախադասութեան քերականական պարզ կարգերը յեղաշրջել և վերածել պատիպատ, ողորպատոյա դարձուածներու՝ որոնց մէջ ընթերցողը իմաստին հետ... ինքզինքն ալ կորսնցնէ :

4. Ոտանաւորէ մէջ չափ բռնուած գրիչը կաշկանդող բռնակալութիւնը հիմնադրատակ կործանել, և անոր տեղ դնել աշատութեան, արդարութեան ու հաւատարմութեան սկզբունքները, որոնք բառերուն

իրաւունք կուտան ուղածնուն պէս նստիլ, ելլել, պառկիլ, կծկուիլ ու երկնալու:

5. Խորտակել այն գրական հինցած նախապաշարումը որ ամէն գրութեան մէջ իմաստ կոչուած ոչնչութիւն մը և ուղղութիւն կոչուած տախկալութիւն մը փրկուելուն մէջ կը կայանայ:

6. Այն բացառիկ պարագաներուն որ հարկ ըլլայ հանրութեան նախապաշարումին առջեւ զոհողութիւն մը ընել և իմաստի պզտիկ, անվնաս քանակութիւններ զետեղել տեղ տեղ, ոչ թէ սովորական գրագէտներու ըրածին նման եփուած ապուրի պէս պատրաստ ներկայացնել զայն հասարակութեան, ու այդպէսով ընթերցող հասարակութիւնը վարժեցնել առանց յոգնութեան արդիւնք քաղելու վատ ու ծուլայնող դրութեան, այլ յոգնեցնել զայն, ստանալիք արդիւնքը ճակտին քրտինքովը ձեռք բերելու դրութեան ենթարկել: Ստիպել որ տաժանքոտ փնտռութեան մը ետքը միայն յաջողի գտնելու իր քիմքին դարերէ ի վեր վարժուած նախապաշարումը, իմաստը:

Այս դրութեամբ, ժողովուրդը ինքնին աստիճանաբար պիտի վարժուի բոլորովին հրաժարելու իրեն համար վարժութիւն մը միայն եղող այդ ոչնչութիւնը փնտռելէ և յանկարծական յեղափոխութեան մը առաջ բերած անպատեհութիւններէն ալ ազատ պիտի մնայ գրական հրապարակը:

7. Խորտակել գրող դասակարգին մէջ բոյն դրած ուրիշ նախապաշարում մը՝ լայն է գրիչին անմիջական կապակցութիւնը

մտքին հետ - և ազատ ասպարէզ տալ ձեռքին, միայն իր զգայնութիւններուն համեմատ շարժելու գրիչը, փրկուելով ուղեղէն մինչեւ դաստակը երկարող ջիղերուն երկրորդական ու շատ անգամ աւելորդ միջամտութիւնէն:

8. Կարճ բառերն ու կարճ նախադասութիւնները վտարել լեզուէն: Եւ անոնց անհրաժեշտութեան պարագային ալ հոգ տանիլ քանի մը կարճեր իրարու կցելու և երկայններ չլինելու:

9. Գրականութեան դուռը ամրապէս գոցել ու արգիլել Սէմպօլիսթ չեղող ու եւէէ գրողի հոն մուտքը, իսկ նոյն յատկութիւնը չունեցող որ եւ է ընթերցողի թոյլ չտալ նոյն իսկ պատուհանէն նայիլ:



2003

Տեղեկագիր - բանախօսութիւն արժանանում 1904 դեկտեմբեր 31ին գումարնում ընկերութեան ընդհանուր ժողովին մէջ, վարչական ժողովի փարսուղարին կողմէ:

Գերբնոր' ր նախագահ եւ պատուարժան անդամներ ,

Ձեռնաւ կոսկածի տեղի կայ որ ձեր հասկցողականութիւններուն սահմանափակումներէն դուրսամնաց լինի մը ըլլայ, երբ յայտարարեմ իմ գերերջանկութիւնս՝ մեր գեղեցկանպատակաւոր ընկերութեան այս երեքէն մէկ աւելիներորդ ընդհանրաժողովին մէջ տեղեկագիր կարդալու բաղդաւորութիւն ինձ վիճակելուն համար :

Ձգգտիկ պատիւ մըն է աս :

Կրկնութիւններ ընելով ձեր պատուարժանութիւններուն թանկագին անհատները գրաւելէ խորշում ընելու պարտաւորութիւնս կ'զգուշացնէ զիս չգարձեալ անդրադառնալ նախորդ տարիներու գեղեցիկ արդիւնքներուն վրայ՝ բեղունացորդ ինքնին «Ներաշխարհ», «Նոճիստան», «Նոր Տաղեր» ու պէս ապրելու դատաւճիւրը իրենց առաջին գլխամասին վրայ ամրակրող գործերով :

Այո՛, Տեարք իմ, չխօսել կրկին կուգեմ այն գործերու վրայ, որոնք իրենց վրայ մէկէ աւելի անդամներ խօսելու պէտքը ձգելու արամադրութիւններուն եզրերէն դուրս ինկած են արդէն, առանց որ այդ անկումը կարող եղած ըլլայ անոնց ամուր ճակատներուն վրայ նոյն իսկ ճաթաւութեամբ մը գոյացնելու :

Եւ հարկ կ'ըլլայ ուրեմն ինծի, խօսքս մասնաւորապատկանել այն տարիին որ այսօր վերջանալու որոշմնագրին վրայ իր յուսկ յետին ստորագրութիւնը կը դնէ կարծես, չղասարսուռ ձեռքերով :

Այս տարուան արդիւնքը, Գերբնոր նախագահ եւ պատուարժան անդամներ, քանակէ աւելի որակնաւորակով կը յատկորշուի, եւ առանց երբէք իր ներկայութեամբ փափկացայտ համատեղութիւնը վերաւորելու մտածողութեան, պէտք է յայտարարեմ թէ զայն գլխաւորապէս կը պարտինք մեր վարչական ժողովի բորբոքումն ու տնօրէնին գլխաւորապէս կը գործունէութեան : Ո՛հ, ո՛հ, ի՛նչ տեսարան . երբ 1909ը իր մարը մանկու պատրաստութիւններուն մէջ, աններելի անփութութիւնով մը մշուշամէջ կ'մէջ կը մոռնայ արեւելքի կողմը, յանկարծ մեր վարչական ժողովի տնօրէնը նկատի կ'առնէ այդ պարագան, կը յիշէ խեղճ Արեւելքը եւ Բոցեր կը ժայթքեցնէ անիկէ . ու աշխարհ հանդիսատես կ'ըլլայ վերջալոյսի եւ արշալոյսի կրկնադարձները միեւնոյն ատեն վայելելու անսպախելի մայր իրականութեան

(Բուռն ծափեր) :

Ոչինչ այնքան համոզիչ է որքան արդիւնքով խօսիլ : Մեր ընկերութեան նպատակը ձեռք բացորոշապարդելու հարկ զգալու չափ ոչ միամտութիւն՝ ժառանգած եմ աղաւնիներէն եւ ոչ ալ փետուրներ . . . : (պղալո՛, պղալո՛) Դուք ինքնին կարող

էք կշռադատել, քանի որ թող կուտաք
ինծի արդիւնքներու վրայ ակնարկ մը ներ-
արձակել հոս:

Մտիկ ըրէք սա քերթուածը՝

(Ակնածոս լուսիւն մը կը սիրէ)

ԼԵՌՆԵՐՈՒ ՁԻՆԻՆ

ձերմակութիւնդ է զուարթութիւնն Անհունին,
կը շնչեմքեզ, ձիւն հեռացայտ լեռներու,
Լեռնագրուած Խինդ զոր մարդիկ հոս չունին,
Վկայարան Ամենայնի, կարծր, աղու:

Դէտ՝ արտերուն որոնք նշոյլդ են շնչին,
Պեպքերուն՝ ուր շնորհքէք փոքր ինչ կը հեղու,
Ի՞նչ կը նայիս, ձիւն միշտ անհալ առանձին,
Քաղաքներուն, ժպիտովդ մեծ տղու:

Անտառները կը մոխրանան հոս տակաւ,
Հրդեհ, աւեր, արիւն կռիւ ամէն՝ դի,
Ի՞նչ կը նայիս, չես եթէ գուլթը անբաւ:

Ձիւն, եթէ չես կոչը Դարձի, ճշմարտի,
Ա՛հ, եթէ սոսկ Վկան ես ցուրտ, պինդ, գոթեմ,
Իջիր լեռնէն եւ ցեխիդ մէջ մեղանչեմ:

(Բուռն ծափեր)

Այո՛, տեարք իմ, ձեր ծափերը ար-
դէն ցոյց կուտան ձեր դնաճատութիւնը,
վստահ եմ որ հասկցաք թէ մեր սկզբունք-
ներուն որ աստիճան հաւատարիմ է այս
գրութիւնը: Ձեւէն դատելով մարդ կը
կարծէ թէ սովորական sonnet մըն է ան:
Բայց ընթերցումէն ետքը մարդ թեթեւ-
թիւն մը կ'զգայ միտքը ազատ գտնելով
այն տպաւորութիւններէն՝ որոնք իմաս-

տով լեցուն հին գլուխ գրուածքներու
արդիւնք են: Այսքան բառ ձեւի բերել,
իրարու քով դնել և նոյն խակ յանգեր չի-
նել, առանց ուղղութեան և իմաստի ծան-
րաբեռնող նիւթերով չաղելու զանոնք,
ան՝ արուեստը, անա գրական ճարտարա-
պետութեան նոր ոճը՝ որուն կը ձկախնք և
որուն ատաղձները աշխարհի չորս կողմէն
կը բերենք իրարու վրայ կը նետենք, ա-
ռանց դամբլու ակամար ու անիմաստ տաղ-
տուկին:

(Հաւանութեան բուռն նշաններ):

Ուրիշ մը՝

ԱՌ՝ ՍՍԱՄՊՈԼ

Ո՛ր Ստամպօլ, գեղեցիկ ու դաժան մի՛ անգամայն,
Մեծ Փոշիքաղաք ուր Դիպուածը կ'իշխէ միայն,
Ուր Բնութիւնը շփացած կը բազմի լըբօրէն,
Ուր կը յորդի մամուռն յաղթ միւսարէներէն,
Կ'երգեմքեզ, անարժան՝ որ ես ամէն տաղի,
Ո՛վ կամքի Սպաննիչ, ո՛վ Ծուլանք կատաղի,
Կ'երգեմքեզ իրեւ Երզն անայլալլ անտառին,
Քեզ՝ իրեւ փութութիւնն հզոր խոնաւ Տարբին,
Երկար ատեն տանջանքս եղար. ո՛ր Ստամպօլ,
Խամբեցնելով սիրտս երիտասարդ խօլ:
Յոգնած եմքնութենէդ ուր ձայն մը չունիս դուն,
Ուր լոկ միւսարէներդ, օրհասիդ մեծ մոմեր,
Դիպուածամոլ հոգիդ կը ցցուեցնենք վեր,
Քու ելեկտրական լոյսդ, ըսէ՛, կայծակը չէ՞,
Աղբահաւաքներդ, ըսէ՛, շուներդ չէ՞ն միթէ:
.....

Որքան կը ցաւիմ որ այս հրաշալի բերթուածը իր երկարաշնչութեան պատճառաւ չկարող եմ ամբողջութեամբ մէջ բերել հոս: Տեսարք իմ, այն գրուածքը մեր ընկերութեան պատիւ կը բերէ մէկէ աւելի տեսակէաներով, նախ իմաստի և ուղղութեան տեսակէտը, որուն վրայ խօսած եմ արդէն: Յետոյ չափ կոչուած բռնակալութեան դէմ վսեմ ընդվզացում մը: Մեր ընկերութեան սկզբունքը ըմբռնելու անկարող հերձուածող մը անշուշտ պիտի փորձէ իր նեղ հասկացողութեան համեմատ վանկերու բամբակ ասոր տողերը, այդ հերձուածողներու ընդունած չափերն են 3-3-4, 4-3-4-3, 4-4-4, 5-5, և չն. և չն.: Սակայն բաւական աշխատելէ ետքը պիտի տեսնէ թէ ասիկա անանկ ամբողջական պայմաններու տակ ինչո՞ղ գրութիւններէն չէ: Իր անհաւատ մոլեռանդութիւնը հիացումի ինքնաբեր, անդսպելի ցայտում մը չպիտի զգայ արդեօք... թերե՛ւս:

Ուրիշ տեսակէտ մըն ալ, Սէմպոյիդմը. բազմահմուտ հեղինակը չէ մոռցած այն առնչութիւնը որ կայ աղբին և ելեկարահան լոյսին մէջ և Սէմպոյիտթ գեղեցկագիտութեան հիանալիօրէն նուրբ ու զգլխիչ պատկեր մը կը չինէ վերջին տողերուն մէջ...

(Ծափեր)

Անդամներէն մէկը. — Ձայն կուզեմ: Նախագահը. — Խօսեցէ՛ք:

Անդամ. — Կը ներէք, պզտիկ գիտողութիւն մը, աղբին և ելեկարահանութեան առնչութիւնը չի հասկցայ, կը հաճի՞ք բացատրել:

ձառախօսք. — Ելեկարահանութիւն առաջ բերելու համար Ամօնեաքի գործածութիւնը կը մո՞ռնաք միթէ...:

Անդամ. — Բայց Ամօնեաքը սղբէն չե՛լէր, այլ...:

ձառախօսք. — Սն ալ անոր ընկերն է, յաճախ միեւնոյն գործողութեան արդիւնք են...:

Անդամ. — Ուղղակի առնչութիւն չկայ...

Վարչական ժողովի անդամներ (հեղինակ). — Տէր Նախագահ, կը բողոքեմ, մեր պատուարժան ընկերակիցը այդ ճամբով գլխաւորած քիս մէջ ուղղութիւն փնտռելու ելած կըլլայ, ինչ որ հակառակ է մեր Prospectus-ին ծրագրուածին:

(Ընդհ. հաւանութեան ձայներ)

Նախագահ. — Դիտողութիւնը կը մերժուի ծրագրուածին տրամադրութեան համաձայն, հեղինակը կը շնորհաւորենք այդ Սէմպոյիտթ գիտին համար, և, խօսքին թելը նորէն ձառախօսին բերնին մէջ դնելէ առաջ, յարգելի ժողովականներէն կը խնդրեմ ինծի ձայնակցել բողոքելու համար այն գեղեցկութիւններու հայտնող գաղափարին դէմ որով կը մտածուի Ստամպոլը զրկել իրեն այդ գերազանցապէս բանաստեղծական աղբահաւքներէն, որոնք մահուանէ վախճալու բան մը չունին արդէն, անոհաւոր ըլլալով մեր նրբաճաշակ ընկերոջ տողերուն մէջ: Բողոքին կը ձայնակցի՞ք...:

(«Անուշ, բուն կերպով, բոլոր հոգիով» կը պոռան ամեն կողմէ):

— Հիմա խօսքը ձառախօսինն է:

(ձառախօսք կը շարունակէ)

Գերբնաիր Նախագահ և պատուարժան անդամներ, արդէն շատ երկարուլու հարկ չեմ տեսներ. կարծեմ կրցի ապացուցանել թէ արդիւնքը փայլուն է այս վերջացող տարւոն մէջ և ապագան խիստ յուսալից: Վարչական ժողովի մեր յարգելի անօրէնը, իր գտած այս ընդհանուր գընահատութեանէն քաջալերուած, պիտի շարունակէ վերը յիշուածին հման գեղարդյութեամբ խորհրդապաշտօրէն իրական գործարներ... արտադրել ի պատիւ մեր ընկերութեան:

Կը մաղթեմ որ մեր միւս անդամներն ալ իրենց գործունէութեան բաժինը բերեն: Ամենքդ ալ կը շնորհաւորեմ ջերմապէս:

Հիմա ընտրողական գործողութիւն մը ունինք: Ինչպէս գիտէք մեր ներքին կանոնադիրը կը տրամադրէ երկու տարին անգամ մը միայն լրացնել մահուամբ կամ այլապէս պակսող վարչական ժողովի անդամներուն թիւը: Այդ պատճառաւ անցեալ տարի չկրցինք մեր հանդուցեալ բարեյիշատակ և բեղմնաւոր ընկերոջ յաջորդը նշանակել:

Հիմա ընտրութիւն պիտի կատարուի:

Ըստ ներքին կանոնադիրի քանակաւ ներկայացնելու իրաւունքը կը պատկանի մեր գերբնաիր հիմնադիր Նախագահին:

(Դեպ ի Նախագահը դառնալով կը խոնարհի)

Նախագահ.—Ամբողջ երկու տարուան շրջանին տաանի չափ զիմողներ ունինք,

սակայն մեր դիւանը անոնցմէ Լեւոն Էսաճանեանի վրայ միայն կը գտնէ պահանջուած պայմաններու լրացումը: Էսաճանեան կը մշակէ նոր սեռ մը՝ որ գեղեցիկ մէկ արահետը կրնայ նկատուիլ Սէմպօլիսթ դպրոցի մեծ և ուղիղ ճամբուն: Իր վրայ դադափար տալու լաւագոյն կերպն է զինքը հրաւիրել որպէս զի արտասանէ իր այդ մշակած սեռին «Գլուխ գործոց քերթուածներ»էն կտոր մը:

Բաց գոյն հագուստով, կարմիր փողկապով, դեղին պիւներով և կապոյտ աչքերով երիտասարդ մը կը յառաջանայ բեմին վրայ: Պատած յօնքերուն տակէն՝ որոնց եկած փակած է սեւ ֆէս մը՝ խիստ նայուածք մը կը պտտցնէ ներկաներուն վրայ և կսկսի արտասանել որոտացող ձայնով մը:

ՍԱԶԵՐԳՈՒԹԻՒՆ

Մա'փ տամ, ել ծուփ տամ...

Ունկընդիրներէ ոմանք կը վախնան, և մանաւանդ կիները սրտնէն փախչելու տրամադրութիւն ցոյց կուտան: Նախագահը հարկ կը տեսնէ միջամտելու և կը հանդարտեցնէ զանոնք բացատրելով թէ, ձայնին և շարժումներուն խստութիւնը դժբախտաբար պահանջումին արդիւնք են միւսայն, հետեւաբար տեղի չի կայ յուզուելու:

Արտասանողը նորէն կսկսի.

ՍԱԶԵՐԳՈՒԹԻՒՆ

Մա'փ տամ, ել ծուփ տամ, ա'ւ սաղ մը չալէ
Մազերէս թե՛ տամ զիս անոր պլլէ.

Ծա'փ տամ, ե'լ ծուփ տամ, հին սաղ մը չալէ,
Մաաներուդ վրայ ինծի հետ քալէ:

(Ծափեր)


Ծա'փ տամ, ե'լ ծուփ տամ, թաց սաղը չալէ,
Արցունքըս սաղիդ թելերուն խէ'ժ է:

(Բուռն ծափեր)

Նախագահ. — Ծափերը պերճախօս են
արդէն... ծուփերն ալ. հիմա ով որ հա-
մամիտ է Պ. Էսաճանուանի ընտրութեան
թող աջ ոտքը վեր առնէ:

Ոտքերը կ'ելեն և կը դոյացնեն մե-
ծամանութիւն մը՝ որ առաջին անգամ
ըլլալով քուէարկութեան տարեգրութիւն-
ներուն մէջ, ջախջախիչ բառը կրնայ ար-
դարացնել իրապէս... հանդէս առջեւի
գրասեղաններուն:

Նոր անգամը իր հանդիսաւոր երդումը
կ'ընէ և ժողովը կը ցրուի:



ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՌՈՐ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Երկու տարի աշխատելու. — այս-
ինքն այլ եւ այլ լրագիրներու մէջ հրա-
տարակութիւններ ընել prospectusի պայ-
մաններուն համաձայն: Եւ անկէ ետք նոյն
պայմանները լրացնող գիրք մը ի լոյս ըն-
ծայել:

2. Գոց սորվիլ ընկերութեան գլխա-
ւոր անդամներուն հեղինակութիւնները եւ
անոնցմէ ծախու առնել առ նուազն...
20 ալան օրինակ:

3. Յարաբերութիւն շունենայ ընկե-
րութեան կողմէ հերձուածող հանչցուած
անձնաւորութիւններու հետ:

4. Ամեն անգամ որ ընկերութեան
անդամ հեղինակ մը - մանաւանդ իմնա-
դիր Նախագահը - խժբժսնի ենթակայ
ըլլայ, այնքան աղմուկ հանել՝ ուրիշ չի
կրնար նոյն ինքն... Միտաք Սուրեան Ղա-
յարիոյ խորհրդարանին մէջ:

5. Ընկերութեան մասնաւոր բժիշկին
կողմէ ստորագրուած բժշկական տեղե-
կագիր մը ներկայացնել:

(Պատահական եւ քղաքական անդամ-
ները գերծ են այս վերջին տրամադրու-
թեան):

Աւելի մանրամասնութիւններու հա-
մար զիմել Վարչական ժողովի տնօրէնին:

Ընկերության պատուակալ Նախագահ

Յ. Գ. ՄԲՄԲՆԱՆ

Պատուակալ անդամներ

ՀՐԱՆԳ ՆԱԶԱՐԵԱՆՅ (Futuriste)

Թղթակից անդամներ

Ռ. ՍՆԻԱԿ (Լողան)

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ (Պոսթըն)

Ընկերության մասնաւոր բժիշկն է

ՏՕՅԹ. ՄՕՆՃԵՐԻ

ԸՆԴՈՐԻՆԱԿԵՑ

ՓԱՅԼԱԿ



21333

